

րանջելու, միշտ գարշահուտ, որովհետեւ անօթի, նուաճ-
լած պեխերուն խուլէն, ու քաշքշուած՝ մօրուքին բեռէն,
վկայութիւն տալու համար աս ու ան դէպքին տարիէն,
հարցին դրուագներէն: Խելօք, խեղճ, անօթի ծերեր -մա-
տաղներո՞ւն բաժինն ինչ էր որ- ամբողջ վաթսուն- եօ-
թանասուն տարի հողին մէջ ապրած, կնիկ, զաւկրներ,
թոռներ թաղած ու թաղած, ա՛լ իրենց մնացորդացը, այդ
ներսած նախադիակը խաչի պէս շալկած...: Որոնք սկսող
օրը կը չափէին -ջերմաչափը սուտ բան մը չէ անշուշտ:
Ու սուտ չէ նաեւ ձայնի մը սիւնակը, մեր հոգիին ներքին
բարեխառնութիւնը բացատրելու դերի մը մէջ- հարսնե-
րուն ձայնովը, բարի կամ չար, ա՛լ անհաւատարիմ իրենց
ականջներէն տառապելով այնքան՝ որքան ապերախտ
իրենց զաւկրներէն, նոյնիսկ թոռներէն, ժամ իջնելու
համար իրենց մարմինը ժողվրտելու ատեն հեղ մը աչք
նետելով բակին, սանդուխներուն, կտորած լուծքերուն,
բոլորն ալ իրենց առողջ օրերուն գինը ներկայող...: Ու
անոնց թանճը, դէպի անարտայայտութիւն ու դէպի
ապշուտիւն հակած դէմքին վրայ ապրելու սկիզբ մըն էր
«Գալոց» քաւութեան: Հիւանդութիւններէն ոմանք
տարիքներու հետ գրած են որոշ հաշտութիւն ու իրենց
կարգ մը նշաններով ալ դաշնակից իրարու: Այդ սրճա-
րանին մէջ ծերերու սա պատկերը ով գիտէ ի՛նչ շահեկան
դասընթացքի մը նիւթը պիտի հայթայթէր եւրոպական
մեծածուն փրոֆեսէօրներու: Ինծի համար, այդ օրերուն,
անիկա տանթէական խորհուրդ մըն էր ցաւերէն,
կրծումէն, լուծումներէն (անդամներու) անկախաբար,
պարզ, պատմութեանց գիրքերով, որ ամէն մէկ ծերին
ճակատը ունէր իրեն գրակալ, լայնօրէն իջած գեղին սե-
փականութեան, ծերերու վայել թոյլբերանութեան իբր
հետեւանք, բայց, պէտք է ձգել կեանքը, այսպէս կիսատ,
ծերերը՝ այսպէս ուրուագիծ, ամէն մէկուն մէջ ապա-
ռաժի պէս յստակ յօրինած ողբերգութիւնը ապրումին
ու... քալել, որպէսզի քալէ վէպն ալ: Դժբախտ արհեստ
մըն է գրելը: Որքան բան կը գոհէ ան, գրողը՝ որպէսզի